Հավելված
Վեդի համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 29-ի N 66 որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՈՆԱՎԱՃԱՌ (ՎԵՐՆԻՍԱԺ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վեդի համայնքում տոնավաճառ (վերնիսաժ) կազմակերպում է Վեդու համայնքապետարանը (այսուհետ՝ կազմակերպիչ)՝ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված տոնական օրերին:

2. Վեդի համայնքում կազմակերպվում են սեզոնային, տոնական, մասնագիտացված, գյուղատնտեսական, ունիվերսալ և այլ տեսակի տոնավաճառներ:

II. ՏՈՆԱՎԱՃԱՌԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Տոնավաճառ կազմակերպելու մասին որոշմամբ սահմանվում են.

1) տոնավաճառի տեսակը, գտնվելու հասցեն,
2) սկսելու և ավարտելու օրերը, աշխատանքային ժամերը,
3) տոնավաճառին մասնակցելու համար դիմելու ժամկետները,
4) տոնավաճառին մասնակցելու թույլտվության ձևը, հայտերի ներկայացման և թույլտվության ստացման կարգը,
5) տոնավաճառի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցառումներն ու դրանց իրականացման պատասխանատուները:

4. Տոնավաճառ կազմակերպելու մասին Վեդի համայնքի ղեկավարի որոշման վերաբերյալ հայտարարությունը տեղադրվում է Վեդու համայնքապետարանի պաշտոնական կայքում տոնավաճառ կազմակերպելու օրվանից առնվազն 15 օր առաջ, ինչպես նաև փակցվում է համայնքի տարբեր վայրերում:

5. Տոնավաճառ կազմակերպելու մասին Վեդի համայնքի ղեկավարի որոշման վերաբերյալ, դրա անցկացումից առնվազն մեկ շաբաթ առաջ, գրավոր տեղեկացվում են ՀՀ ոստիկանությունը, ՀՀ պետեկամուտների կոմիտեն, ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, իսկ կախված տոնավաճառի բնույթից, նաև այլ պետական կառավարման մարմինները:

6. Կազմակերպչի կողմից տոնավաճառի մուտքի (մուտքերի) մոտ (բացօթյա տոնավաճառի դեպքում՝ այն մասերում, որտեղից որպես կանոն սպասվում է այցելուների առավելագույն հոսք) փակցվում է ցուցանակ՝ տոնավաճառի անվանման և անցկացման օրերի, ժամերի, կազմակերպչի հեռախոսահամարների վերաբերյալ:

7. Կազմակերպիչը ապահովում է տարածքում աղբամանների առկայությունը, իսկ օրվա ավարտին՝ աղբահանության կազմակերպումը, ինչպես նաև ժամանակավոր զուգարանների տեղադրումն ու աշխատանքը, եթե հարակից տարածքում հանրային զուգարաններ չկան:

8. Կազմակերպիչն ապահովում է իր ներկայացուցչի մասնակցությունը տոնավաճառի գործունեության ամբողջ ընթացքում: Կազմակերպչի ներկայացուցիչը՝

1) ըստ կազմակերպչի կողմից տրված թույլտվությունների կամ ներկայացված հայտերի հիման վրա կազմված ցուցակների գրանցում է տոնավաճառի մասնակիցներին,
2) կատարում է մեքենաների, վաճառակետերի բաշխումը մասնակիցների միջև,
3) հետևում է տարածքի մաքրման աշխատանքներին,
4) կատարում է օրենքով, սույն կարգով և տոնավաճառ կազմակերպելու մասին Աբովյան համայնքի ղեկավարի որշմամբ նախատեսված այլ գործողություններ,
5) համագործակցում է տարածքի անվտանգությունը և հասարակական կարգը պահպանող մարմինների հետ:

III. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏՈՆԱՎԱՃԱՌԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Վեդի համայնքում կազմակերպված տոնավաճառին մասնակցելու համար անհրաժեշտ է առնվազն 3 օր առաջ դիմում ներկայացնել Վեդու համայնքապետարան:

10. Դիմումին կից ներկայացվում են տվյալներ վաճառվող ապրանքի մասին, ինչպես նաև՝

1) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը,

2) անհատ ձեռնարկատերերի և կազմակերպություններ համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը:

11. Համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական վճարը վճարելու դեպքում դիմումատուին տրամադրվում է տոնավաճառին մասնակցելու թույլտվություն:

12. Տեղական վճարը չվճարելու կամ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում, ինչպես նաև, եթե դիմումին կից նշված ապրանքի մասին տվյալները չեն համապատասխանում նախատեսված տոնավաճառի տեսակի հետ, թույլտվություն չի տրամադրվում:

13. Թույլտվություն ստացած անձինք տոնավաճառին մասնակցելու համար ներկայանում են տոնավաճառը սկսելուց առնվազն 2 ժամ առաջ, գրանցվում և ստանում իրենց վաճառատեղերը:

14. Գրանցվելու ժամանակ մասնակիցը պետք է իր մոտ ունենա համայքապետարանի տրված թույլտվությունը, անձնագրի (պետական գրանցման վկայականի) պատճենները, իսկ կազմակերպությունների ապրանքը վաճառողները նաև՝ լիազորագիր:

15. Հայաստանի Հանրապետության օրենսդրության և/կամ սույն կարգի խախտման դեպքում մասնակցին կարող է արգելվել մասնակցել տոնավաճառին:

IV. ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Տոնավաճառի մասնակիցը մասնակցության իրավունքը չի կարող փոխանցել այլ անձի:

17. Տոնավաճառի մասնակիցը՝ վաճառքի վայրում՝ չի կարող փոփոխություն կատարել (փոխել սեղանների դասավորվածությունը և այլն) առանց կազմակերպչի թույլտվության:

18. Մասնակիցը պարտավոր է տոնավաճառը ավարտվելուց հետո մաքրել իրեն հատկացված վաճառատեղը, աղբը և մնացած ապրանքը հանել, տարածքը բերել նախկին տեսքի:

19. Տոնավաճառում առևտուր իրականացնելիս մասնակիցը պետք է ապրանքի վրա փակցնի համապատասխան գնապիտակներ:

20. Վաճառողը առևտուրն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կարգի հիման վրա: